ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ԳԵՎՈՐԳ ԵՊՍ. ՍԵՐԱՅԴԱՐՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ամբողջ հայության ուշադրությունը սևեռված էր ս. Էջմիածնի աղոթքներին՝ «Վասն հայրենեաց ազատագրութեան և խաղաղութեան ամենայն աշխարհի»: Հայոց աղոթքն ընդունվեց և կամոքն Աստուծո «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը հայոց քաջորդիներով ու եղբայրական ժողովուրդների արիական ջանքերով մաքրեց հայրենի հողը թշնամիներից:

Ահա այս ծանր տարիներին հիմնվեց «Էջմիածին» ամսագիրը, որն առաջին ավետաբերներից մեկը եղավ՝ հայ ժողովրդին տալով հաղթության և խաղաղության ավետիսը:

Երեսուն խաղաղ տարիներ են անցել այն օրվանից: Եվ այսօր, տոնելով «Էջմիածին» ամսագրի 30-ամյակը, ցանկանում ենք նորանոր հաջողություններ խաղաղ պայմաններում առավել պայծառանալու հավատավոր հայի որոնող միտքն ու զարկերակը հանդիսացող «Էջմիածին» ամսագիրը:

Բարձր գնահատելով «Արարատ» ամսագրի շարունակությունը հանդիսացող «Էջմիածին» ամսագրի 30-ամյա գործունեությունը, ցանկանում ենք ամսագրի բոլոր աշխատակիցներին նորանոր հաջողություններ՝ հոգևոր, հայրենասիրական, խաղաղասիրական ոգու ամրապնդման բարձր գործունեության մեջ: